«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100, ՀՎՀՀ 02504913

№ 68/Բ16

« 16 » Փետրվարի 2026թ

«ՍՄԱՐՏ ԷՔՍԻՄ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
Կ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ reaktiv@mail.ru

Հարգելի պարոն Կարապետյան,

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ի միջև 2026թ-ի հունվարի 15-ին կնքված N **«ԵՔԼ-ԳՀԾՁԲ-26/8»** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)

7.14 կետի համաձայն՝

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու **ծանուցումը ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում**: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ, որի հիմքով «Երքաղլույս» ՓԲԸ-ն 2026թ-ի հունվարի 29-ին «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է համաձայնագիր կնքելու համար, սակայն «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում համաձայնագիրը չի կնքել և «Երքաղլույս» ՓԲԸ-ին չի ներկայացրել:

Ուստի, հիմք ընդունելով 2026թ-ի հունվարի 15-ին կնքված N «ԵՔԼ-ԳՀԾՁԲ-26/8» Պայմանագրի 7.14 կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ

հոդվածի 3-րդ մասը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն 2026թ. փետրվարի 16-ից միակողմանի լուծում է N **«ԵՔԼ-ԳՀԾՁԲ-26/8»** պայմանագիրը **1-ին և 2-րդ չափաբաժինների մասով**:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը Մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝

1-ին և 2-րդ չափաբաժնով նախատեսված «Հենասյան հիմքի վերականգնում (գրունտի քանդումով)» և «Հենասյան հիմքի վերականգնում (ասֆալտի ծածկույթի և գրունտի քանդումով)» ծառայությունների մասով՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բաց ված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել՝

996000 (ինը հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ՝ որպես «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում,

1494000 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ՝ որպես «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ի որակավորման ապահովում.

5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարումները չկատարելու դեպքում «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում, տուժանքի տեսքով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանջագրերը, տուժանքի համաձայնագրերը 1.4 կետի համաձայն կներկայացվեն «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ի կողմից, ոչ ուշ, քան գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրացուցային օրվա ընթացքում, պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները վճարելու դեպքում, «Սմարտ Էքսիմ» ՍՊԸ-ի նկատմամբ չի նախաձեռնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ *Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ*

Կատարողներ՝ Ա. Արաբյան,
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80